

Սփյուռքի համար առաջնային համարվող մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման նպատակով սփյուռքահայ դիմորդներին ՀՀ կառավարության կողմից 2016թվ. ապրիլի 15-ի N 382-Ն որոշման համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում /բակալավրիատ/ պետպատվերի շրջանակներում հատկացվել են 70 տեղեր, որոնց բաշխումը կատարվելու է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվող հանձնաժողովի կողմից, մրցութային կարգով, դիմորդների կողմից ներկայացված փաստաթղթերի

քննարկման միջոցով: Անվճար տեղերի մրցույթին կարող են մասնակցել մանկավարժական, հայագիտական, մշակութային մասնագիտությունների համար դիմորդները: Պետական պատվերի տեղերից բացի, նույն կարգի համաձայն, սփյուռքահայ դիմորդները հնարավորություն ունեն ընդունվել նաև վճարովի համակարգ, այդ թվում նաև քոլեջներ, մագիստրատուրա և ասպիրանտուրա:

Առկա ուսուցմամբ բակալավրիատի /<< կառավարության 2016թվ. ապրիլի 15-ի N 382-Ն որոշման. հավելված 1, 2016-2017ուս. տարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, անվճար/ ուսանելու համար դիմորդները փաստաթղթերը ներկայացնում են << կրթության և գիտության նախարարություն ս. թ. հուլիսի 7-ից մինչև ս.թ. օգոստոսի 22-ը, բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով /առաջին կուրսում/ ուսանելու համար՝ ս.թ. հուլիսի 7-ից մինչև ս.թ. հոկտեմբերի 3-ը -ը ներառյալ, հեռակա բաժիններում ուսանելու համար՝ ս.թ. հուլիսի 7-ից մինչև ս.թ. հոկտեմբերի 11-ը ներառյալ, հետբուհական/ասպիրանտական/ ծրագրով ուսանելու համար՝ ս.թ.հուլիսի7-ից մինչև դեկտեմբերի 15-ը ներառյալ, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանելու համար՝ ս.թ. հուլիսի 7-ից մինչև ս.թ. սեպտեմբերի 15-ը ներառյալ, նախապատրաստական բաժանմունքում ուսանելու համար՝ս.թ. հուլիսի7-ից մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ:

Հայոց լեզվին բավարար տիրապետելու և կրթական ծրագրերին հարմարվելու նպատակով սփյուռքահայ դիմորդներն ընդունվելու են բուհերի նախապատրաստական բաժանմունք՝ ուսուցման մեկ տարի ժամկետով: Հայոց լեզվից և մասնագիտական առարկաներից բավարար գիտելիքների առկայության պարագայում, ինչը որոշվում է գիտելիքների ստուգման արդյունքներով, դիմորդներին հնարավորություն կտրվի ուսումն սկսել առաջին կուրսից: Գիտելիքների ստուգումները << ուսումնական հաստատություններում անցկացվում են ս.թ. օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածում :

Ներկայացնում ենք նաև դիմորդի կողմից լրացվող դիմում-հարցաթերթիկի նմուշը, ինչպես նաև համալսարանական մասնագիտությունների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանկը՝ վճարովի համակարգի ուսման վարձաչափերի նշումով:

Խնդրում ենք սույն փաթեթը տրամադրել համայնքային կառույցներին և կրթօջախներին, հնարավորության սահմաններում՝ հայտարարությունը տարածել նաև մամուլով: